ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2026թ. մարտի 18-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 27-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ. Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ. Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. Erasmus+ KA2 "Reforming Undergraduate Education for Green and Sustainable Development in Armenia and Moldova" ծրագրի շրջանակում «Կառավարում» ոլորտային շրջանակի (որակավորումների) վերափոխումների կարևորության, դրանց Եվրոպական կայունության կարողունակությունների շրջանակին (GreenComp) համապատասխանության և ԵՄ Կանաչ համաձայնագրի ու կենսաբազմազանության ռազմավարությունների նպատակներին ծառայեցնելու մասին հարց
2. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Ն. Ջրբաշյանի հեղինակած «Էկոնոմետրիկա (Մաս 1, Հիմունքներ)» վերտառությամբ դասագրքի տպագրության և ԵՊՀ մրցույթին մասնակցության երաշխավորության մասին հարց
3. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ. Erasmus+ KA2 "Reforming Undergraduate Education for Green and Sustainable Development in Armenia and Moldova" ծրագրի շրջանակում «Կառավարում» ոլորտային շրջանակի (որակավորումների) վերափոխումների կարևորության, դրանց Եվրոպական կայունության կարողունակությունների շրջանակին (GreenComp) համապատասխանության և ԵՄ Կանաչ համաձայնագրի ու կենսաբազմազանության ռազմավարությունների նպատակներին ծառայեցնելու մասին հարցը:

1. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը հանդես եկավ զեկուցմամբ՝ ամփոփ ներկայացնելով Erasmus+ KA2 "Reforming Undergraduate Education for Green and Sustainable Development in Armenia and Moldova" ծրագրի շրջանակում ֆակուլտետում

ձևավորված աշխատանքային խմբի գործունեությունը և 7-րդ կրթական մակարդակի (մագիստրատուրա) «Կառավարում» ոլորտային շրջանակի (որակավորումների) բնութագրի բարելավման ուղղությամբ ձևակերպած առաջարկությունները: Նախ՝ զեկուցման առաջին մասում, ներկայացրեց սույն ծրագրի շրջանակում Երևանի պետական համալսարանի ընդգրկվածությունը: Նշեց, որ գործընթացում ներգրավված են ԵՊՀ երեք ֆակուլտետներ՝ Տնտեսագիտության և կառավարման, Միջազգային հարաբերությունների և Կենսաբանության: Ընդգծեց, որ «Կառավարում» ոլորտային շրջանակի վերափոխումների աշխատանքներում ներգրավված է ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Հանրային կառավարման ամբիոնի վարիչ դոցենտ Վահագն Ազլյանը, քանի որ «Կառավարում» որակավորումը շնորհվում է նաև «Հանրային կառավարում» կրթական ծրագրի շրջանավարտներին: Զեկուցման երկրորդ մասում ներկայացրեց 7-րդ կրթական մակարդակի (մագիստրատուրա) «Կառավարում» մասնագիտության ոլորտային որակավորման շրջանակի վերափոխման առաջարկությունները.

1. /Գիտելիք/ Գիտելիք և իմացություն հատվածում ավելացնել 1 նոր կետ.

- «Ցուցաբերում է կայուն կառավարման հիմնադրույթների և գործիքակազմի վերաբերյալ համակողմանի գիտելիք և իմացություն»

2. /Հմտություններ/ Գիտելիքի և իմացության կիրառում հատվածում ավելացնել 2 նոր կետ.

- «կարող է գնահատել և վերլուծել էթիկական, բնապահպանական և հանրային կառավարման սոցիալ-տնտեսական փոխառնչությունները»,

- «կարող է կիրառել ձեռքբերված գիտելիքները՝ խթանելու կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը և ինտեգրելու կանաչ գործարարության սկզբունքները որպես սոցիալ-տնտեսական քաղաքականության բաղադրիչ»:

Ընդգծեց, որ առաջարկվող փոփոխությունները կապահովեն «Կառավարում» ոլորտային որակավորման շրջանակի վերափոխումը և համապատասխանեցումը եվրոպական չափորոշիչներին, միջազգային լավագույն փորձին և ոլորտային աշխատաշուկայում պահանջվող հմտություններին: Հավելեց, որ ընդգրկվող դրույթները, որոնք վերաբերում են կիրառական կառավարմանը, ռեսուրսների պատասխանատու կառավարմանը և «Կանաչ» զարգացման սկզբունքների իրականացմանը, համապատասխանում են նաև Եվրոպական կայունության կարողունակությունների շրջանակին (GreenComp) և աջակցում ԵՄ Կանաչ համաձայնագրի ու կենսաբազմազանության ռազմավարությունների նպատակներին: Զեկույցն ամփոփելով՝ դեկան Կ. Խաչատրյանը նշեց՝ ներկայացվող առաջարկությունների հիման վրա փոփոխությունը պետք է իրականացնի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

2. Հարցեր հնչեցրեցին տ.գ.թ., դոցենտ Գ. Հայրապետյանը, տ.գ.թ., դոցենտ Գ. Սահակյանը, տ.գ.դ., պրոֆեսոր Թ. Թորոսյանը, տ.գ.թ. Ա. Սարգսյանը: Հարցադրումները

առնչվում էին այս համատեքստում ֆակուլտետում գործող մյուս մասնագիտությունների բարելավման հնարավորություններին, առաջարկվող ձևակերպումներում «համակողմանի» եզրույթը «խոր և համակողմանի», «առավել խոր և համակողմանի» եզրույթներով փոխարինելուն:

3. Հարցադրումներին պատասխանելով՝ դեկան Կ. Խաչատրյանը նշեց, որ քննարկվող հարցի շրջանակում «Կառավարում» մասնագիտության ընտրությունը պայմանավորված է «Էրազմուս+» ծրագրի շրջանակում «Կանաչ և կայուն տնտեսական զարգացման» համատեքստում արդեն իսկ ստանձնած պարտավորությունների մասով աշխատանքները ավարտին հասցնելու անհրաժեշտությամբ, նաև հույս հայտնեց, որ հետագայում ԿԳՄՍ նախարարությունը այս առումով փոփոխությունների հնարավորություն կընձեռի ֆակուլտետում գործող մյուս մասնագիտությունների համար:

4. Ելույթ ունեցավ Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, դոցենտ, տ.գ.թ. Աննա Հակոբջանյանը: Հարցադրումներին պատասխանելով՝ նշեց, որ աշխատանքային խմբի ակտիվ գործունեության ընթացքում կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ, ինչի արդյունքում ձևավորվել է ներկայացված փաստաթուղթը, որը մանրամասն մշակված փաստաթուղթ է, հետևապես «խոր» և «առավել խոր» ձևակերպումների ներառման տրամաբանական պահանջ չկա: Ելույթն ամփոփելով՝ ամբիոնի վարիչ դոցենտ Ա. Հակոբջանյանն ընդգծեց, որ բակալավրի կրթական ծրագրում «Կանաչ» տնտեսություն և կառավարում համատեքստում հարցադրումներ չեն դիտարկվում:

5. Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց՝ օրակարգի 1-ին հարցը դնել քվեարկության:

1. ՈՐՈՇԵՑԻՆ. Առաջարկվող վերափոխումները համապատասխանում են եվրոպական չափորոշիչներին և աջակցում են ԵՄ Կանաչ համաձայնագրի ու կենսաբազմազանության ռազմավարությունների նպատակներին:

Օրակարգի 1-ին հարցը հաստատվեց՝ քվեարկության 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

2. ԼՍԵՑԻՆ. ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նաիրուհի Մխիթարի Զրբաշյանի հեղինակած «Էկոնոմետրիկա (Մաս 1, Հիմունքներ)» վերտառությամբ դասագիրքը տպագրության և ԵՊՀ մրցույթին երաշխավորելու վերաբերյալ հարցը:

2. ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ սույն դասագիրքը տպագրության երաշխավորելու հարցը քննարկվել է նաև ֆակուլտետի Գիտական խորհրդի թիվ 7 նիստում: Այդ կապակցությամբ միջնորդությամբ հանդես է եկել ԵՊՀ տնտեսագիտության և

կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհուրդը, իսկ հարցի քննարկման նպատակով դոցենտ, տ.գ.թ. Ն. Զրբաշյանը հանգամանալից ներկայացրել է դասագրքի ստեղծման աշխատանքները: Դեկան Կ. Խաչատրյանն ընդգծեց, որ տ.գ.թ., դոցենտ Ն. Զրբաշյանի հեղինակած գիրքը համապատասխանում է որպես դասագիրք ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությամբ սահմանված պահանջներին՝ համաձայն որի՝ պահանջվող երեք գրախոսություններից մեկը պետք է լինի արտաքին գրախոսություն: Մատնանշեց, որ առկա են երեք գրախոսների՝ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտներ՝ տ.գ.թ. Ալվարդ Ալբերտի Խառատյանի և ֆ.-մ.գ.թ. Աշոտ Վազրիկի Կակոսյանի, Հայ-Ռուսական համալսարանի Մաթեմատիկական մեթոդները և տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտության մեջ և բիզնեսում ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Աղասու Թավադյանի դրական կարծիքները, նաև ամբիոնի որոշումը, ֆակուլտետի մեթոդխորհրդի դրական եզրակացությունը: Հավելեց նաև, որ 2026 թ. մարտի 9-ի Երևանի պետական համալսարանի ռեկտորի ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից հրատարակվող դասագրքի հեղինակին լրացուցիչ վարձատրություն վճարելու մասին» հրամանի համաձայն՝ այսուհետ ԵՊՀ գիտական խորհրդի կողմից հրատարակման երաշխավորված և ուսումնական տարվա ընթացքում հրատարակված առաջին 7 դասագրքերի հեղինակ(ներ)ին վճարվելու է լրավճար 1 միլիոն ՀՀ դրամի չափով: Հարցի քննարկումն ամփոփելով՝ դեկան Կ. Խաչատրյանը առաջարկեց՝ քվեարկությամբ վերահաստատել տ.գ.թ., դոցենտ Ն. Զրբաշյանի հեղինակած «Էկոնոմետրիկա (Մաս 1, Հիմունքներ)» վերտառությամբ դասագրքի տպագրության երաշխավորությունը և երաշխավորել ԵՊՀ մրցույթին մասնակցելու համար:

2. ՈՐՈՇԵՑԻՆ. Հիմք ընդունելով ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 30.01.26թ. թիվ 5 նիստի երաշխավորությունը, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նաիրուհի Մխիթարի Զրբաշյանի հեղինակած «Էկոնոմետրիկա (Մաս 1, Հիմունքներ)» վերտառությամբ դասագիրքը երաշխավորել տպագրության և ԵՊՀ մրցույթին մասնակցելու համար:

Դասագիրքը երաշխավորվեց տպագրության՝ միաձայն քվեարկությամբ (27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ